ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» նոյեմբերի 2014 թվականի N 152 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3-րդ հոդվածի 8-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2012 թվականի ապրիլի 13-ի N 01/11.2/1710-12 գրությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել՝ Գյումրի քաղաքի վարչական տարածքի գոտիավորման նախագծի մշակման աշխատանքների քաղաքաշինական առաջադրանքը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան		
Գ. Ադամյան		
Ա. Բաղեյան		
Ա. Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Մ. Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		
Հ. Խաչատրյան		
Հ. Կարապետյան		
Տ.Հովհաննիսյան		

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«14» նոյեմբերի 2014 թ.

Հավելված
Գյումրի համայնքի ավագանու
2014 թվականի նոյեմբերի 14-ի
N 152- Ա որոշման

Ա Ռ Ա Ջ Ա Դ Ր Ա Ն Ք

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Նախագծի նպատակն է Գյումրի քաղաքի վարչական տարածքի փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման համար պարտադիր պայմանների սահմանումը:

Քաղաքի տարածքը բաժանվելու է առանձին թաղամասերի՝ համապատասխան անվանումներով և ըստ կառուցապատման առաջնահերթության, փուլային կարգով կատարվելու են գոտիավորման նախագծային աշխատանքներ;

Քաղաքի կենտրոնն ունի գոտիավորման նախագիծ, նախատեսվում է կատարել ճշգրտման և փոփոխման աշխատանքներ:

Նախագիծը պետք է ներառի՝

1. **Նախնական նախագծային աշխատանքներ և ելակետային նյութերի հավաքագրում, ճշգրտում և վերլուծություն, այդ թվում՝**

- ելակետային նյութերի հավաքում և իրավիճակային վերլուծություն,
- հողհատկացումների վերլուծություն,
- առաջադրանքների և համաձայնեցված նախագծերի վերլուծություն,
- բնակչության և աշխատողների, շենքային և բնակելի ֆոնդի առկայության և մակերեսների, մշակութային, կենցաղային, կոմունալ, ինժեներական սպասարկման ենթակառուցվածքների, կանաչապատման մակարդակի վերլուծություն և դրանց տեխնիկատնտեսական ցուցանիշների մշակում,
- շենքերի, կառույցների և ինժեներական սպասարկման ենթակառուցվածքների, տեխնիկական վիճակի գնահատում,
- տարածքի սեյսմիկ վտանգի գնահատում,
- պատմամշակութային հուշարձանների առկայության, տեխնիկական վիճակի և տեղաբաշխման վերլուծություն,
- բնապահպանական իրավիճակի և բնության հատուկ պահպանվող տարածքների գնահատում,
- կարմիր և դեղին գծերի պահպանման, կառուցապատման խտության ուսումնասիրություն, միջավայրի բարեկարգման և գեղագիտական մակարդակի վիճակի գնահատական:

2. **Նախագծային աշխատանքներ**

- գոտիավորման տարածքում վերակառուցման, արդիականացման և ստորգետնյա տարածության օգտագործման նպատակներով մանրամասն հատակագծային առաջարկությունների մշակում,

- գործառնական գոտիավորում ըստ թույլատրելի օգտագործումների և համապատասխան սահմանների սահմանում,
- շինարարական գոտիավորում՝ կառուցապատման խտության, տոկոսի,կառուցապատման գծերի սահմանում,
- լանդշաֆտի կազմակերպում,
- տրանսպորտային-հետիոտն շարժման կազմակերպում,
- ինժեներական ցանցերի և կառույցների սխեմայի մշակում,
- ստորգետնյա տարածության օգտագործման սխեմայի մշակում,
- փողոցների լայնական պրոֆիլների մշակում, պատմամշակութային հուշարձանների և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման միջոցառումներ,
- քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ:

3. Գոտիավորման աշխատանքներ / գոտիավորման նախագիծ/

Գոտիավորման նախագծի կազմը պետք է ներառի՝

- գրաֆիկական մաս՝ Մ 1: 2000,
- տեքստային մաս:

Գրաֆիկական մասում ցույց են տրվում՝

- տարածքի գործառնական գոտիավորումն ըստ օգտագործման տեսակների և դրանց տարբերակող նշանները,
- տարածքի ծավալատարածական գոտիավորումն ըստ կառուցապատման չափորոշիչների և դրանց տարբերակող նշանները,
- տարածքի կառուցապատումը կարգավորող նախագծային կարմիր և այլ գծերը կոորդինատային նշահարմամբ,
- պատմամշակութային հուշարձանների և բնության հատուկ պահպանվող տարածքների գոտիները,
- տրանսպորտային-հետիոտն հաղորդակցության կանոնակարգմանն ու կարգավորմանը վերաբերող տարածքները և գոտիները,
- մշակութային, կենցաղային, կոմունալ ինժեներական սպասարկման ենթակառուցվածքների կանոնակարգմանն ու կարգավորմանը վերաբերող տարածքները և գոտիները,
- ինժեներական նախապատրաստման, բուֆերային և վտանգավոր բնական երևույթներից և տեխնածին վտանգներից տեղանքի ինժեներական պաշտպանական գոտիների սահմանները,
- սեյսմիկ ռիսկի տարբեր մակարդակով գոտիները,
- ցուցադրական նյութերի / գծագրեր, հեռանկարներ/ մշակում:

Տեքստային մասը ներկայացվում է առանձին հոդվածների և աղյուսակների տեսքով, որոնց հիմնական բաժիններն են՝

- ընդհանուր դրույթներ,
- գոտիներում թույլատրելի օգտագործումների /կառուցապատումների/ սահմանափակումների հիմնավորում,
- կառուցապատումը կարգավորող չափորոշիչներ,
- կառուցապատման կանոններ,
- տարածքի փաստացի օգտագործման և նախագծային հաշվեկշիռ:

4. **Գոտիավորման նախագծի կազմին և բովանդակությանը ներկայացվող այլ լրացուցիչ պահանջներ.**

- գոտիավորման նախագիծը կազմելիս հաշվի առնել ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրերը և հայեցակարգերը, մասնավորապես՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգը,
- գոտիավորման նախագիծը ենթակա է համալիր փորձաքննության,
- ինժեներական համակարգերի առկա իրավիճակի փաստագրման և հեռանկարային զարգացման մասով նախագծային աշխատանքներն իրականացնելիս համագործակցել ջրային և էներգետիկ ցանցերը տնօրինող, շահագործող ընկերությունների հետ,
- ներկայացնել աշխատանքի թղթային և էլեկտրոնային տարբերակները:

5. **Գոտիավորման աշխատանքներն իրականացնել ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի <<Բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերի մշակման, փորձաքննության համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին>> N 408 որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխան:**

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ և ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ **Ա. ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» նոյեմբերի 2014 թվականի N 153 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 120-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 30-ի «Գյումրու համայնքային սեփականություն համարվող Երևանյան խճուղի N 30ա հասցեի նախակրթարանի շենքի երկու մասնաշենքերը «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության օգտագործումից հետ վերցնելու և դրանք անհատույց օգտագործման իրավունքով ամերիկյան «Փարոս» հիմնադրամի «Դեպի առաջ» հասարակական կազմակերպությանը տրամադրելու մասին» N 120-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) վերնագրում «երկու մասնաշենքերը» բառերը փոխարինել «մեկ մասնաշենքը» բառերով և «դրանք» բառը փոխարինել «այն» բառով,
   2) որոշման 1-ին կետի 3-րդ տողի «երկու մասնաշենքերը» բառերը փոխարինել «մեկ մասնաշենքը» բառերով և 4-րդ տողի «մասնաշենքը» բառը փոխարինել «երկու մասնաշենքերը» բառերով,
   3) որոշման 2-րդ կետի 1-ին տողի «երկու մասնաշենքերը» բառերը փոխարինել «մեկ մասնաշենքը» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան		
Գ. Ադամյան		
Ա. Բաղեյան		
Ա. Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Մ. Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«14» նոյեմբերի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«14» նոյեմբերի 2014 թվականի N 154 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 58-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետությանը հողամաս նվիրաբերելու մասին» N 58-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) 1-ին կետի 1-ին տողի «ախտաբանաանատոմիական» բառը փոխարինել «պատոլոգոանատոմիական» բառով,
   2) 2-րդ կետից հանել «հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան		
Գ. Ադամյան		
Ա. Բաղեյան		
Ա. Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Մ. Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		
Հ. Խաչատրյան		

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«14» նոյեմբերի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» նոյեմբերի 2014 թվականի N 155 –Ա

<<ՕՅՈՒՆՋՅԱՆ>> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՐՀԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով <<Օյունջյան>> բարեգործական հիմնադրամի գրությունը (մուտքագրված քաղաքապետարանում՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ին N 10686 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Միեր Մկրտչյան փողոց N 47/4 հասցեում գտնվող, Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող 0,1125 (զրո ամբողջ հազար հարյուր քսանհինգ տասհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը 50 (հիսուն) տարի ժամկետով անհատույց (մշտական) օգտագործման տրամադրել <<Օյունջյան>> բարեգործական հիմնադրամին՝ արհեստի կենտրոն կառուցելու նպատակով:
2. Արհեստի կենտրոնի նախագծման և կառուցման աշխատանքներն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան		
Գ. Ադամյան		
Ա. Բաղեյան		
Ա. Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Մ. Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս.ԹԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«14» նոյեմբերի 2014 թ.